ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

0010, ՀՀ, ք.Երևան, Զաքիյան 2
Հեռ.՝ (+374 10) 600 701, 600 702
Հեռապատճեն՝ (+374 10) 600 703
Էլ-փոստ՝ info@advocates.am
Կայք՝ www.advocates.am

ՏԵՂԵԿԱՆՔ

Փաստաբանների իրավունքների պաշտպանության հարցով ՀՀ փաստաբանների պալատի կողմից իրականացրած գործողությունների մասին

11.08.2017թ. ք.Երևան

14.06.2017թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահը հայտարարությամբ է հանդես եկել նշելով, որ՝

1. դատարանի վարչական շենք մուտք գործելիս փաստաբանը և փաստաբանի իրը կարող է զննության ենթարկվել.
2. անթույլատրելի է փաստաբանին կամ փաստաբանի իրը զննության ենթարկելիս խտրական մոտեցում ցուցաբերել.
3. դատարանի վարչական շենք մուտք գործելիս փաստաբանը չի կարող խուզարկության ենթարկվել:

27.06.2017թ. ՀՀ փաստաբանների պալատի արագ արձագանքման հանձնախումբը հայտարարություն է տարածել, որով փաստաբաններին խնդրել է դատական կարգադրիչների կողմից փաստաբանների նկատմամբ զննություն կատարելու փորձերի ժամանակ տեղի ունեցող հնարավոր բացասական միջադեպերն արձանագրելու և կանխելու նպատակով նիստի ժամանակի և վայրի մասին նախապես տեղեկացնել հանձնախմբին՝ Փաստաբանների պալատի ներկայացուցիչների ներկայությունն ապահովելու համար:

28.06.2017թ. Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի հարակից տարածքում փաստաբաններ Լուսինե Սահակյանի և Արա Զաքարյանի նկատմամբ ոստիկանների կողմից ցուցաբերած բռնի գործողությունների վերաբերյալ նույն օրը ՀՀ փաստաբանների պալատի նախագահը դիմել է ՀՀ ոստիկանության պետին՝ նշված միջադեպն ուսումնասիրելու և մեղավոր ոստիկաններին պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու կապակցությամբ: Նույն օրը ոստիկանությունը ծառայողական քննություն է նշանակել միջադեպի կապակցությամբ:

30.06.2017թ. Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը, խորհրդի անդամներ՝ Կարեն Մեժլումյանը, Հարություն Հարությունյանը և Սիմոն Բաբայանը այցելել են Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության

դատարանի վարչական շենք, որտեղ պետք է տեղի ունենար թիվ ԵԱԴԴ/0028/01/17 քրեական գործով նիստը:

30.06.2017թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահը գրավոր դիմել է ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարին առաջարկելով՝ դատարանների շենքերն ապահովել զննության այնպիսի սարքավորումներով, որոնք փաստաբանների զննության ժամանակ կբացառեն կամ նվազագույնի կհասցնեն կարգադրիչների անմիջական միջամտությունը:

12.07.2017թ. ՀՀ փաստաբանների պալատում տեղի է ունեցել ակումբի նիստ, որին մասնակցել են ՀՀ փաստաբանների պալատի նախագահը, խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանը, Սիմոն Բաբայանը և Արայիկ Ղազարյանը: Քննարկվել են ինչպես զննության հետ կապված հարցերը, այնպես էլ դատարանի կողմից սանկցիաներ կիրառելու, հանրային պաշտպան նշանակելու, դատարանի կողմից դատական նիստերի դահլիճից հեռացնելու սանկցիայի հաշվարկման հարցերը: Փաստաբանների պալատի խորհրդի ներկա անդամները ձեռնպահ են մնացել կարգապահական վարույթներին առնչվող հարցերի քննարկումից: Ակումբի նիստի ժամանակ, քննարկման արդյունքներով, Պալատի նախագահը տեղեկացրել է, որ զննության հետ կապված հարցը կներկայացնի խորհրդի քննարկմանը, իսկ դահլիճից հեռացնելու մասին դատական սանկցիայի հաշվարկման հարցը կբարձրացվի իրավասու մարմնի առջև:

20.07.2017թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահը դիմել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանին, խնդրելով դիմել ՀՀ դատարանների նախագահների խորհրդին՝ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված «նիստերի դահլիճից հեռացնել» դատական սանկցիայի կիրառման համար նախատեսված ժամանակի (ժամի) հաշվարկման կարգը պարզաբանելու նպատակով: Մարդու իրավունքների պաշտպանը դիմել է դատարանների նախագահների խորհրդին:

21.07.2017թ. ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը որոշում է կայացրել փաստաբանների իրավունքների պաշտպանության վերաբերյալ և վերլուծելով հիշյալ դեպքերը, որոշել է՝

1. Փաստաբաններին զննության ենթարկելու դեպքերի մասով՝

1.1. Արձանագրել, որ՝

- *Փաստաբանները քրեական գործերով արդարադատության կայացման հարցում կարևոր և անփոխարինելի սուբյեկտներ են և պետական ծառայողները պարտավոր են փաստաբանների նկատմամբ ցուցաբերել հարգալից վերաբերմունք՝ ղեկավարվելով փաստաբանի բարեխղճության կանխավարկածով.*
- *Առանց հատուկ սարքերի փաստաբանին զննելու համար դատական կարգադրիչը պետք է ունենա իրավական և փաստական հիմքեր.*
- *Փաստական հիմքը կարող է լինել այն դեպքում, երբ կա ողջամիտ կասկած, որ փաստաբանը կարող է օրենքով արգելված իրեր տեղափոխել.*
- *Անթույլատրելի է զննություն կատարելիս դրսևորել խտրական վերաբերմունք փաստաբանների նկատմամբ.*

- *Զննությունը չի կարող փաստացի վերածվել խուզարկության կամ ստեղծել փաստաբանական գաղտնիքի հրապարակման վտանգ կամ փաստաբանի համար նվաստացուցիչ պայմաններ.*
- *Անթույլատրելի է դատարանի և դատական կարգադրիչների կողմից՝ փաստաբանի մասնագիտական գործունեության իրականացման համար անհրաժեշտ իրերը, այդ թվում՝ անվտանգ տարայով խմելու ջուրը, տեղափոխելու արգելքը:*

1.2. Առաջարկել ՀՀ դատական դեպարտամենտին՝

- *Զննությունը կատարել տեխնիկական միջոցներով (սկանավորմամբ)՝ առանց փաստաբաններին լրացուցիչ անհարմարություն պատճառելու.*
- *Փաստական հիմքի առկայությամբ փաստաբանի պայուսակի պարունակությունը զննելու դեպքում (եթե փաստաբանը համաձայնվել է անձամբ ցույց տալ պարունակությունը՝ առանց փաստաթղթերի բովանդակությունը բացահայտելու), փաստաբանի պահանջի դեպքում, զննությունը կատարել առանձին սենյակում՝ համապատասխան սեռի դատական ծառայողների և ընթերակաների մասնակցությամբ՝ արդյունքների վերաբերյալ կազմելով արձանագրություն երկու օրինակից (մեկ օրինակը հանձնելով փաստաբանին).*
- *դատական կարգադրիչներին հրահանգել, որ փաստաբանի պայուսակը կամ այլ իրը զննելու դեպքում, դատական կարգադրիչն իրավասու չէ՝ ա) ինքնուրույն որոնողական գործողություններ կատարել, այդ թվում՝ բացել պայուսակը կամ տեղաշարժել պայուսակի մեջ գտնվող իրերը, և բ) որևէ փաստաթղթի բովանդակությանը ծանոթանալ:*

2. Կոչ անել փաստաբաններին՝ իրենց վստահորդներին պաշտպանելու հարցում դրսևորել համարձակություն, սկզբունքայնություն և բարեխղճություն՝ պահպանելով Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները:

3. Ընդունել ի գիտություն, որ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջներին համապատասխան գործող փաստաբանն ունի փաստաբանի գործունեության պաշտպանության օրենքով սահմանված երաշխիքները և ՀՀ փաստաբանների պալատի լիարժեք աջակցությունը:

4. *Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատարին՝ սույն որոշումն ուղարկել ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարին և ապահովել որոշման հրապարակումը ՀՀ փաստաբանների պալատի կայքում:*

03.08.2017թ. ՀՀ փաստաբանների պալատի և ՀՀ դատական դեպարտամենտի ներկայացուցիչները քննարկել են դատական կարգադրիչների կողմից փաստաբաններին զննության ենթարկելու հետ կապված հարցը և քննարկման արդյունքում կողմերը որոշել են հետևյալ համատեղ հայտարարությամբ հանդես գալ՝

1. Կողմերը կարևորում են դատարանում դատավարության մասնակիցների և դատարանում գտնվող այլ անձանց կյանքի և առողջության պաշտպանության անհրաժեշտությունը, հատկապես քրեական այն գործերով, որոնցով անձինք մեղադրվում են կյանքի և առողջության դեմ ուղղված, ինչպես նաև հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ կատարելու մեջ:

2. ՀՀ դատական դեպարտամենտը հայտարարում է, որ մինչև հատուկ սարքավորումներ ձեռք բերելը փաստաբանների և նրանց իրերի հետ կապված զննությունը դատական այն գործերով, որոնց ժամանակ անհրաժեշտություն է առաջանալու ապահովել դատավարության մասնակիցների և դատարանում գտնվող այլ անձանց կյանքի և առողջության պաշպանությունը, որպես կանոն իրականացնելու է հետևյալ կերպ՝

- *Եթե մետաղորսիչը ազդանշան է տալիս փաստաբանի կամ նրա մոտ առկա իրերի զննության ժամանակ, ապա փաստաբանին առաջարկվում է հատուկ առանձնացված պահարանում թողնել մետաղական իրերը և կրկին մետաղորսիչով զննվել.*
- *Եթե կրկին մետաղորսիչը փաստաբանի կամ նրա մոտ առկա իրերի զննության ժամանակ ազդանշան է տալիս, ապա փաստաբանի մոտ առկա իրերի պարունակությունը զննելու դեպքում (եթե փաստաբանը համաձայնվել է անձամբ ցույց տալ պարունակությունը՝ առանց փաստաթղթերի բովանդակությունը բացահայտելու), փաստաբանի պահանջի դեպքում, զննությունը կատարվելու է առանձին սենյակում՝ համապատասխան սեռի դատական կարգադրիչի (փաստաբանի պահանջի դեպքում նաև նրա կողմից այդ պահին հրավիրած ընթերակայի) մասնակցությամբ՝ արդյունքների վերաբերյալ կազմելով արձանագրություն երկու օրինակից (մեկ օրինակը հանձնելով փաստաբանին).*
- *դատական կարգադրիչները փաստաբանի պայուսակը կամ այլ իրը զննելու դեպքում՝ ինչպես նախկինում, այնպես էլ հետայսու ինքնուրույն որոնողական գործողություններ չեն կատարելու և որևէ փաստաթղթի բովանդակությանը չեն ծանոթանալու:*

3. Սույն հայտարարությունը չի կարող սահմանափակել կողմերի՝ օրենքով վերապահված իրենց իրավասությունները, այդ թվում՝ ՀՀ փաստաբանների պալատի անդամների անկախությունը: